Հայաստանի Հանրապետություն

Լոռու մարզ

Լեռնանցքի համայնքապետարան

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ. Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 32 22-39
E-mail: lernancq@mail.ru

№ԼՄ/ԼՀ025/ 111

«21» 05 2018 թ.

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Ա. Նալբանդյան.

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ղեկավարի թիվ 16-Ա, 17 որոշումները, թիվ 05 կարգադրությունը և համայնքի ավագանու թիվ 19-Ա, 20-Ա, 21, 22-Ա, 23-Ա, 24, 25, 26, 27-Ն որոշումները:

Առդիր 19 թերթ:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«14» 05 2018թ. հեռ. 093-32-22-39

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լեռնանցքի համայնքապետարանի կարիքների համար 2018 թվականին կատարվող գնումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Ապահովել գնումների պլանի հրապարակայնությունը՝ օրենքով սահմանված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

հեռ. 093-32-22-39

«14» 05 2018թ.

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 17

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով << Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասին 1-ին կետը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լեռնանցքի համայնքապետարանի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանված կարգով և ժամկետներում այն համաձայնեցնել համապատասխան լիազոր մարմնի հետ:

Լեռնանցք համայնքի ղեկավար Լ. Արզարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

« 14 » 05 2018թ. հեռ. 093-32-22-39

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Համաձայն ՀՀ Կառավարության 08.05.2003թ-ի թիվ 714 որոշման, Լեռնանցք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելու և վարձակալությամբ տրամադրելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ - Լևիկ Աբգարյան

Տեղակալ - Մարտիկ Վիրաբյան

Քարտուղար - Արսեն Հարությունյան

Անդամներ - Վարդան Բաղդասարյան (մարզպետարանի ներկայացուցիչ)

ZIIZ - Սամվել Վարդանյան (ավագանի)

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 27.12.2016թ-ի թիվ 29 կարգադրությունը:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«14» 05 2018թ. հեռ. 093-32-22-39

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19-Ա

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14 -Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Լեռնանցք համայնքի ավագանու 2018թ. մայիսի 14-ի նիստի օրակարգը.

## ՕՐԱԿԱՐԳ

Լեռնանցք համայնքի ավագանու 2018թ-ի մայիսի 14-ի նիստի

1. Հայաստանի Հանրապետության Լեռնանցքի համայնքապետարանում ՀՀ Լոռու մարզպետի կողմից կազմված հանձնաժողովի իրականացրած վարչական հսկողության արդյունքում ներկայացված ակտում արձանագրված թերությունների վերացման մասին:
2. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի 2-րդ և 3-րդ փողոցներում գազաֆիկացման նպատակով կառուցված գազատարը համայնքի հաշվեկշռում գրանցելու և <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին ժամանակավոր անհատույց տրամադրելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.05264 հեկտար մակերեսով հողամասը՝ իր 100.76 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինությունով Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցուն /Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/ սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու մասին:
4. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն հատկացնելու մասին:

5. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման մասին:
6. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու մի շարք որոշումները մասնակի անվավեր ճանաչելու մասին:
7. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրերը առանց մրցույթի վարձակալությամբ տալու մասին:
8. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի 2018 թվականի բյուջեում հոդվածի փոփոխություն կատարելու մասին:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Առաքելյան Ա. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Մանուկյան Է. | | | |
| Չախոյան Ա. | | | |
| Վարդանյան Ս. | | | |
| Վիրաբյան Կ. | | | |
| Օհանյան Յ. | | | |

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« 14» 05 2018թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ.
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6-4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20- Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՆՑՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱԿՏՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 37-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 30.01.2018 թվականի թիվ 101/107.3.1/479-18 գրությունը համայնքի ավագանին

որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2018 թվականի 1-ին եռամսյակում Լեռնանցքի համայնքապետարանում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված ակտի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունել ի գիտություն:

2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ակտում արձանագրված թերությունների և բացթողումների ուղղման և կանխարգելման ուղղությամբ:

3. Ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին:

---

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Առաքելյան Ա. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Մանուկյան Է. | | | |
| Չախոյան Ա. | | | |
| Վարդանյան Մ. | | | |
| Վիրաբյան Կ. | | | |
| Օհանյան Յ. | | | |

Լեռնանցքի համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստան 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 64
հեռ. 093-32-22-39
E-mail: lernancq@mail.ru

«14» 05 2018թ.

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳԱԶԱՏԱՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ և <<ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԲԸ-ԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի 2-րդ և 3 րդ փողոցներում գազաֆիկացման նպատակով կառուցված 300,5 գծմ գազատարը համայնքի 2018 թվականի հաշվեկշռում գրանցելուն և գազամատակարարումը անխափան մատակարարելու նպատակով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին սեփականության իրավունքով ժամանակավոր անհատույց տրամադրելուն:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Առաքելյան Ա. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Մանուկյան Է. | | | |
| Չախոյան Ա. | | | |
| Վարդանյան Ս. | | | |
| Վիրաբյան Կ. | | | |
| Օհանյան Յ. | | | |

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«14» 05 2018թ.

Հասցե 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6-4
հեռ. 093 32 22 36
E-mail: lernanc@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22- Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.05264 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ՝ ԻՐ 100.76 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՈՎ, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ / ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ/ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 1.2 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912 որոշման 34 կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանին՝

Որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքի վարչական սահմաններում՝ 11 փող. թիվ 33 (Վկայական N 22122017-06-0046) գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.05264 հա հողամասը և հողամասի վրա կառուցված

100.76 ք.մ ընդհանուր մակերեսով եկեղեցին անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցուն /Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին/:

---

Ավագանու անդամներ՝ Կողմ Դեմ Ձեռնպահ

Առաքելյան Ա.

Գևորգյան Ա.

Մանուկյան Է.

Չախոյան Ա.

Վարդանյան Ս.

Վիրաբյան Կ.

Օհանյան Յ.

Լեռնանցքի համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« 14» 05 2018թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 64
հեռ. 093 - 32 - 22 - 39
E-mail: lernancq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 23 - Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 07-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Առաքելյան Ա. | (ստորագրություն) | | |
| Գևորգյան Ա. | (ստորագրություն) | | |
| Մանուկյան Է. | (ստորագրություն) | | |
| Չախոյան Ա. | (ստորագրություն) | | |
| Վարդանյան Մ. | (ստորագրություն) | | |
| Վիրաբյան Կ. | (ստորագրություն) | | |
| Օհանյան Յ. | (ստորագրություն) | | |

Լեռնանիստ համայնքի ղեկավար՝ Լ. Արզարյան

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու
2018 թվականի մայիսի 14-ի N 23-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Պետրոսյան Հասմիկ Մ. — 20000 (քսան հազար) դրամ / սոց. օգնություն/.
2. Վարդանյան Նավասարդ Լ. — 25000 (քսան հինգ հազար) դրամ / սոց. օգնություն/.
3. Ղազարյան Նորիկ Վ. — 20000 (քսան հազար) դրամ / սոց. օգնություն/.
4. Աջամյան Մարիամ Ս. — 20000 (քսան հազար) դրամ / սոց. օգնություն/.
5. Չախոյան Լյովա Ռ. — 20000 (քսան հազար) դրամ / սոց. օգնություն/.

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գ. Վարդանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«14» 05 2018թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ.
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093-32-22-39
E-mail: lernancq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 24

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի և 42-րդ հոդվածի պահանջներով՝

Ավագանին որոշում է .

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Առաքելյան Ա. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Մանուկյան Է. | | | |
| Չախոյան Ա. | | | |
| Վարդանյան Ս. | | | |
| Վիրաբյան Կ. | | | |
| Օհանյան Յ. | | | |

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Արզաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«14» 05 2018թ.

Հասցե 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6-4
հեռ. 093-32-22-39
E-mail: lernancq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 25

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿԻ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ 1-ին կետով, 4-րդ կետի 3-րդ մասով, 23-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Լեռնանցք համայնքի ավագանու 2017 թ. հուլիսի 12-ի թիվ 21-Ա և 2018 թ. փետրվարի 26-ի թիվ 11-Ա որոշումները՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Սույն որոշման ընդունման պահից անվավեր ճանաչել ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 12-ի և 2018 թվականի փետրվարի 26-ի <<Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն հատկացնելու մասին>> թիվ 21-Ա և 11-Ա որոշումների հավելվածները՝ Ռոզա Առաքելյանի մասով:

2. Համայնքի ղեկավարին՝ մեկամսյա ժամկետում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման 1-ին կետում նշված իրավական ակտերի փոփոխության հետևանքով առաջացած հետևանքների վերացումը ապահովելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

---

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Առաքելյան Ա. | | | |
| Գեորգյան Ա. | | | |
| Մանուկյան Է. | | | |
| Չախոյան Ա. | | | |
| Վարդանյան Ս. | | | |
| Վիրաբյան Կ. | | | |
| Օհանյան Յ. | | | |

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«14» 05 2018թ.

Հասցե 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093-32-22-39
E-mail: lernancq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Լեռնանցք համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրերը առանց մրցույթի վարձակալությամբ տրամադրելուն:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի 1 (մեկ) հեկտարի վարձակալության գինը՝ մեկ տարվա համար սահմանել. 1 գլուխ խոշոր եղջերավոր անասուն՝ կով 1000 (մեկ հազար) դրամ, մոզի՝ 750 (յոթ հարյուր հիսուն) դրամ, մանր եղջերավոր անասունների համար՝ 250 (երկու հարյուր հիսուն) դրամ:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Առաքելյան Ա. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Մանուկյան Է. | | | |
| Չախոյան Ա. | | | |
| Վարդանյան Ս. | | | |
| Վիրաբյան Կ. | | | |
| Օհանյան Յ. | | | |

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Արզարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«14» 05 2018թ.

Հասցե 1810,
Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6-4
հեռ. 093 32 22 30
E-mail: lernancq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 27-Ն

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 70-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Լեռնանցք համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի << Լեռնանցք համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 41-Ն որոշման մեջ կատարել հոդվածի փոփոխություն՝

ա/5122 հոդվածը /վարչական սարքավորումներ (01/01/01 դասակարգում)/ պակասեցնել 100000 (մեկ հարյուր հազար) դրամով:
բ/5134 հոդվածը /արտաքին լուսավորություն (06/04/01 դասակարգում)/ ավելացնել 100000(մեկ հարյուր հազար) դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Առաքելյան Ա. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Մանուկյան Է. | | | |
| Չախոյան Ա. | | | |
| Վարդանյան Ս. | | | |
| Վիրաբյան Կ. | | | |
| Օհանյան Յ. | | | |

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Արզաքյան